ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1956 Общественные науки

Գրշ. Խայատրյան

ՀՈՒՇԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՕՐԵՐԻՑ

Այս տարվա նոյեմբերի 29-ին լրանում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման 36 տարին։ Այդ տարիների ընթացքում մեր սոցիալիստական Հայրենիքը դարձել է միանգամայն անճանաչելի։ Նախկին ցարական հետամնաց, բացառապես գյուղատնտեսական նահանգից, այն՝ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ղեկավարության և ռուս մեծ ժողովրդի օգնության շնորհիվ, դարձել է արդյունաբերական-գյուղատնտեսական առաջավոր երկիր։ Բազմադարյան պատմություն ունեցող հայ ժողովրդի արվեստը, գրականությունը, կուլտուրան սովետական տարիներին ապրեց անանախընթաց վերելք։ Անգրագիտությունը վաղուց իվեր անցել է պատմության գիրկը։ Ռեսպուբլիկայում գործող բազմաթիվ ինստիտուտները, գիտա-հետազոտական հաստատությունները, Գիտությունների ակադեմիան, հարստացնում են սովետական գիտությունը, տեխնիկան։

Ի՞նչ դրության մեջ էր գտնվում Հայաստանը և հայ ժողովուրդը նախքան մեր երկրում սովետական կարգերի հաստատումը։ Որպես ականատես այդ ժամանակների իրադրության ու մասնակից Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ կապված դեպքերի, ստորև բերում եմ իմ հուշերը մեր ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող այդ օրերի վերաբերյալ։

1920 թվականին, հատկապես Մայիսյան ապստամբության գաղանային ճնշումից հետո, հայ աշխատավորությունը գտնվում էր տնտեսական վատթարագույն պայմանների մեջ։ Նա զրկված էր քաղաքական, արհմիութենական կամ հասարակական այլ կազմակերպությունների միջոցով իր պահանջները լեգալ եղանակով առաջադրելու որևէ հնարավորությունից։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրյակին հայ աշխատավորության վիճակը հասավ անասելի դժվարին աստիճանի։

Դաշնակցության երկու և կես տարվա տիրապետությունը ժողովրդի համար ստեղծել էր վերջնական բնաջնջման սպառնալիք։ Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ դաշնակների տիրապետության շրջանը կազմում էր նրա ամենամռայլագույն ու ողբալի էջերը։ Ժողովրդական մասսաների նկատմամբ «կառավարական» աստիճանավորների կամայականությունները, սանհաշիվ և անսահման ապօրինի տուրքերի գանձումները, բացահայտ կողոպուտները, սպանությունները թագավորում էին ամբողջ երկրում։

Հայաստանում շարունակվում էին ցարական կառավարության օրոք եղած հարաբերությունները, գյուղացին տառապում էր սակավահողությունից և հողազրկությունից։ Կալվածատիրական ու վանքապատկան հողերը մնացել էին անձեռնմխելի։ Աշխատավոր գյուղացիության վրա իշխում էր կուլակի ծանր լեռը։ Հատ ու կենտ արդյունաբերական թույլ ձեռնարկությունները կանգնած էին վերջնական քայքայման ու կործանման առաջ։

Հայ աշխատավոր ժողովուրդը այս ծանր դրությունից ազատվելու համար դեռևս 1920 թ. մայիսին բոլշևիկյան պարտիայի ղեկավարությամբ ապստամբություն էր բարձրացրել։ Չնայած այն բանին, որ դաշնակներին հաջողվել էր, անգլո-ամերիկյան իմպերիալիստների օժանդակությամբ և մաուզերա-խմբապետական գերազանց ռազմական ուժերի շնորհիվ, ապստամբների արյամբ մարել բռնկած հրդեհը, սակայն հայ ժողովուրդը դեռևս շատ գավառներում և շրջաններում շարունակում էր իր պայքարը, որը խորը հատակից ղեկավարում էր բոլշևիկների պարտիան։ Այսպես, օրինակ՝ հենց հունիս ամսից Մայիսյան ապստամբության ճնշումից անմիջապես հետո, դաշնակների դեմ ռազմական պայքար էր ծավալվում Շամշադինի և Ղազախի շրջաններում. իսկ հուլիսից, Զանգեզուրի և այլ գավառներում քաղաքացիական կռիվները ստանում են սուր բնույթ։ Ժողովրդական պայքարը ավելի կազմակերպված բնույթ ստացավ 1920 թ. աշնան ամիսներից։ Օգոստոսի սկզբից ժողովրդական մասսաների պայքարն սկսվեց Ղարաբաղի սահմաններում և Զանգեզուրի գավառի բոլոր շրջաններում, սեպտեմբերին՝ Իջևանում, հոկտեմբերին՝ Ղափանում։

1920 թ. նոյեմբերի 20-ից Իջևանի և Շամշադինի շրջանները արդեն լրիվ մաքրվել էին դաշնակ կառավարիչներից, և ամբողջությամբ դտնվում էին ապըստամբների ձեռքում։ Նոյեմբերի 29-ին Քարվանսարայում (ներկայիս Իջևան) բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ կազմակերպվեց Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն, որի նախագահն էր Ս. Կասյանը։ Նույն օրը Հայաստանի Կոմունիստական պարտիայի հետ միատեղ, երկրի աշխատավոր ժողովրդի ցանկությամբ և կամքով, Ռևկոմը Հայաստանը հռչակեց Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկա։

Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեն նոյեմբերի 30-ին համաշխարհային սոցիալիստական ռևոլյուցիայի առաջնորդ մեծ Լենինին ուղարկեց ողջույնի հեռագիր։

Վ. Ի. Լենինը՝ Ռևկոմի նախագահ ընկ. Կասյանին ուղարկեց ողջույնի պատասխան հեռագիր, որտեղ ասված էր՝

«Հանձին Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Ձեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[1]։

Դեկտեմբերի 2-ին Հայաստանի Ռևկոմը ռազմական ուժերի գլուխն անցած, որը կազմվել էր ապստամբված բանվորներից և գյուղացիներից, ինչպես և ապստամբներին օգնության եկած Կովկասում գործող 11-րդ բանակի զորամասերից, շարժվում է դեպի Երևան։ Ամբողջ ճանապարհին հայ աշխատավորությունը երախտագիտության մեծ զգացմունքներով ու խանդավառությամբ է ընդունում իր ազատարարներին։ Բանվորների գլխավորությամբ մայրաքաղաքի ամբողջ բնակչությունը Կարմիր զորքերի գլուխն անցած Ռևկոմին ընդունեց աղ ու հացով և ծաղկեփնջերով։

Այդ նույն օրը Սովետական Հայաստանի ռազմական ուժերի Գլխավոր հրամանատարության հրամանով Հայաստանի ռազմական ուժերի զորամասերը վերանվանվեցին Սովետական Հայաստանի Կարմիր Բանակ։ Կարմիր Բանակում սահմանվեց խստագույն ռևոլյուցիոն կարգապահություն։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։

Երիտասարդ Սովետական կառավարությունը ձեռք էր առնում խիստ միջոցներ՝ ամենաարագ կերպով սկսելու տնտեսության քայքայված վիճակի վերականգնումը։ Դեկտեմբերի 18-ին հրահանգվեց ամբողջ ռեսպուբլիկայի դպրոցներում վերսկսել պարապմունքները։ Նույն ամսի 25-ին Երևանում հայտարարվեց կոմունիստական առաջին շաբաթօրյակը, որին մասնակցեց բանվորների ու ծառայողների հետ միասին նաև քաղաքի աշխատավորության մեծամասնությունը։ Առաջին իսկ օրվանից հաստատվեց ռևոլյուցիոն խիստ կարգապահություն՝ ապահովելով քաղաքացու անձի, նրան պատկանող սեփականության անձեռնմխելիությունը։ Սակայն, երիտասարդ Սովետական իշխանության միջոցառումները, որոնք ուղղված էին քայքայված տնտեսության վերականգնմանը, աշխատավորական մասսաների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը, երկրում խաղաղության ամրապնդմանը, հանդիպում էին դեռևս բոլորովին արմատախիլ չարված դաշնակների դիմադրությանը, որոնք ամեն կերպ աշխատում էին խափանել և խոչընդոտ հանդիսանալ Սովետական իշխանության և նրա տեղական օրգանների գործունեությանը։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո էջմիածնի գավառի Ղուրդուղուլու (այժմ Հոկտեմբերյան) շրջանում ես աշխատում էի որպես կոմերիտմիության շրջանային կոմիտեի պատասխանատու քարտուղար։ Պարտիայի շրջանային կոմիտեի պատասխանատու քարտուղարն էր Բաքվի կոմունայի ակտիվ մասնակից, Քարվանսարայի և Ղազախի շրջաններում դաշնակների դեմ պայքարած ընկ. Գևորգ Հարությունյանը (Պապաշա)։ Շրջանային ռևոլյուցիոն կոմիտեի նախագահն էր ընկ. Պողոս Թադևոսյանը (նույն գավառի Սամաղարի շրջանի Հայթաղ գյուղացի), որը Սովետական Ռուսաստանից, որպես հայ կոմունիստ, մոբիլիզացվել էր և ուղարկվել Հայաստան՝ մշտական աշխատանքի։ Սովետական կարգերի հաստատումից անցել էր ընդամենը երկու և կես ամիս. այդ ժամանակամիջոցում շրջանի համարյա բոլոր գյուղերում ստեղծվել էին պարտիական, կոմերիտական սկզբնական կազմակերպություններ (բջիջներ)։ Գյուղական ռևոլյուցիոն կոմիտեները (հեղկոմները) հանդիսանում էին Սովետական իշխանության տեղական օրգանները և վայելում էին աշխատավորական մասսաների սերն ու հարգանքը։ Հայ ժողովուրդը իրեն կզգում էր ոչ միայն ազատագրված հահագործողների և բախտախնդիրների դաժան ու ծանր լծից, այլև իր հայրենի կտուրի տակ զգում էր հանգիստ ու ապահով։ Ամենուրեք նա փառաբանում էր Լենինի պարտիային, ռուս մեծ ժողովրդին, որը եղբայրական օգնության ձեռք մեկնեց, իրեն ազատեց վերջնական բնաջնջման վտանգից։

1921 թ. փետրվարի 17-ը խիստ ցուրտ մի օր էր։ Սովորական կարգով իրենց աշխատանքները սկսեցին շրջանի հիմնարկները։ Շրջանի գյուղերից ժամանած կոմբջիջների պատասխանատու քարտուղարներ, գյուղական ակտիվիստներ մտնում էին պարտշրջկոմի պատասխանատու քարտուղար ընկ. Գևորգ Հարությունյանի առանձնասենյակը, ընկերական ջերմ զրույցի միջոցով հաղորդում իրենց աշխատանքների մասին, ստանում համապատասխան ցուցումներ, իսկ ագիտացիայի բաժնից ստանալով իրենց համար առանձնացրած քաղաքական դրականությունը՝ թերթերն ու պլակատները մեկնում էին իրենց գյուղերը։

Տենդագին աշխատանք էր կատարվում և կոմերիտմիության շրջանային

կոմիտեում։ Մեկ և կես ամսվա աշխատանքների գրավոր հաշվետվությունը շրջանային կոմիտեի նիստում (որի անդամներն էին ընկ. ընկ. Ռուբեն Հարությունյանը և Խաչիկ Ռոստոմյանը), քննվելուց հետո պատրաստվեց Գավկոմ ներկայացնելու։ Փոստատար միլիցիոները ընդունելով փոստը, ուղևորվեց Էջմիածին։

Էջմիածնի ճանապարհին, Այղր-լճի ջրաղացի մոտ, մի խումբ դաշնակ ավանտյուրիստներ կանգնեցնում են նրան, խլում փոստը ու պահանջում՝ ետ դառնալ Ղուրդուղուլի (այժմ Արմավիր), հայտնել, թե «սասունցի ավազակները հարձակվել են ջրաղացի վրա, սպանել այնտեղ գտնվող բոլոր մարդկանց, թալանել ջրաղացի ալյուրը» և որ իբր թե նրանք էլ խլել են իր հրացանն ու փոստը։

Ինչպես պարզվեց հետագայում, դաշնակ ավանտյուրիստները համախմբվելով Արագածի լեռնալանջի սասունցի գաղթականների գյուղերում, Ս. Վրացյանի գլխավորությամբ նախապատրաստել էին զինված ավանտյուրա և փետրվարի 17-ին հարձակվել Էջմիածնի վրա։ Էջմիածնում սկսվում է փողոցային կռիվը։

Դաշնակների ուշադրության և հարձակման հիմնական օբյեկտը լինում է Ջեկայի (արտակարգ հանձնաժողովի) շենքը, որը խիստ դիմադրություն կ ցույց տալիս ու մի քանի անգամ ետ շպրտում դաշնակների հարձակումը՝ նրանց պատճառելով մեծ կորուստներ։ Այդ անհավասար մարտերում ընկնում են Էջմիածնի Արտակարգ հանձնաժողովի նախագահ, Մայիսյան ապստամբության ակտիվ մասնակից Նավասարդյանը, հանձնաժողովի կոմիսար Գառնիկ Սաղոյանը և ուրիշներ։ Դաշնակները գրավում են Էջմիածնի գավառի պետական օրգանները։ Սկսվում է գազանային, վայրենի ծեծն ու խոշտանգումները ոչ միայն կոմունիստների, այլև սովետական հիմնարկների անպարտիական ազնիվ աշխատակիցների նկատմամբ։ Բանտերը լցվում են կոմունիստներով և սովետական ակտիվ աշխատակիցներով։

Էջմիածնում տանելով ժամանակավոր «հաղթանակ», դաշնակները կազմում են պատժիչ էքսպեդիցիաներ և ուղարկում գավառի շրջաններն ու գյուղերը, այնտեղի կոմունիստների հետ դատաստան տեսնելու համար։

Փոստատար միլիցիոներին Այղր-լճի ջրաղացի մոտ «հանդիպած» դաշնակների զինված խումբը հանդիսանում էր հենց այդ էքսպեդիցիաներից մեկը, որի ղեկավարումը հանձնված էր ավանտյուրիստ Այվազին։ Փոստատար-միլիցիոները, որը Ղուրդուղուլի գյուղի բնակիչ էր, համակերպվելով ավանտյուրիստներին, ներկայանում է պարտշրջկոմի պատ. քարտուղար ընկ. Գևորգ Հարությունյանին, հայտնում դաշնակների «հանձնարարությունը»։ Լսելով միլիցիոներին և բնավ չկասկածելով նրա ասածների ճշմարտության վրա, ընկ. Գևորգ Հարությունյանը իր մոտ է կանչում շրջանային միլիցիապետին, և ինձ (շրջհեղկոմի նախագահ ընկ. Պողոս Թադևոսյանը մեկ օր առաջ մեկնել էր Էջմիածին շրջհեղկոմի նախագահների գավառային խորհրդակցությանը մասնակցելու համար), կարգադրում անմիջապես հավաքել կոմունիստական ջոկատը, որը կազմված էր ինչպես պարտիականներից, այնպես էլ կոմերիտականներից, պահակներ կարգել բոլոր ճանապարհներին, խուզարկել և բանտարկել կասկածելի անցորդներին։ Ընկ. Գևորգ Հարությունյանը՝ վերցնելով իր

հետ մի խումբ զինված ընկերներ, շարժվեց դեպի «դեպքի վայրը»՝ Գեչերլու (Մրգաշատ)։

Արևը մոտ էր մայրամուտին, երբ ջոկատը հասավ Գեչերլու գյուղը։ Ամեն ինչ թվում էր խաղաղ ու հանգիստ, չէր նկատվում տագնապի որևէ նշան։ Ջոկատը գյուղի հրապարակում սպասում էր հետագա կարգադրության։ Ընկերներից մեկը հայտնեց, որ Պապաշան պահանջել է Սարդարաբադում գտնված սահմանապահ գումարտակից մեկ վաշտ և գնդացիրային ջոկատ։ Մինչև վաշտի ժամանումը նա կարգադրել էր տաքանալու համար հավաքվել գյուղի քահանա տեր-Գարեգինի տան դահլիճը։ Չնայած բոլորն էլ դողում էին ցրտից, բայց տերտերի տան դահլիճում տաքանալը նրանց մեջ առաջացրեց դժգոհություն. «Ինչո՞ւ անպայման տերտերի տանը,— դժգոհում էր ընկ. Հմայակ Պողոսյանը (շրջհեղկոմի հողբաժնի վարիչն էր, մահացել է 1932 թ.) — ում հայտնի չէ այդ տերտերի գործունեությունը ամբողջ շրջանում»,— ասում էր նա իրեն հատուկ Ղուրդուղուլիի բարբառով։ Ընդամենը մեկ ժամ հետո հաստատվեց ջոկատի կոմունիստների դժգոհության ճշմարտացիությունը։

Ջոկատի անդամները դեռ նոր էին ներս մտել տերտերի «տաք» դահլիճը, իրենց հրացանները շարել պատի տակ, ու մոտենալով վառարանին տաքացել ցրտից, երբ լսիրշ մի մարդ՝ մինչև ատամները զինված, «մաուզերը» մարտական դրությամբ պատրաստ ձեռքում՝ երևաց դահլիճի դռների մեջ։ Դա խմբապետ Այվազն էր, որը մաուզերիստներին հատուկ գոռոզությամբ գոչեց. «Հանդարտ, ձեռքեր ձրգի վեր»։ Պապաշան, երբ տեսավ խմբապետ Այվազին, լսեց նրա լսիրշ արտահայտությունները, ձեռքը մեկնեց դեպի իր ատրճանակը, որը հենց նույն վայրկյանին էր արձակել վրայից ու դրել կողքին։ Ապա բացականչեց.

— Ավազակ, ես քեզ ցույց կտամ, թե ինչ է նշանակում փախչել բանտից.

Բոլորին հայտնի էր, որ Այվազը որպես դաշնակ մաուզերիստ-խմբապետ, չեզոքացված էր սովետական օրգանների կողմից և գտնվում էր էջմիածնի բանտում։ Լսվեցին մաուզերի համազարկերը. Պապաշան արյունաթաթախ, ձեռքը դեռևս չհասցրած իր հրազենին, մի պտույտ գործելով, ընկավ հատակին։ Խմբապետ Այվազի մաուզերի համազարկի հետ մեկտեղ բացվեցին դահլիճից դեպի պատշգամբ նայող պատուհանները, որտեղից ցցվեցին տասնյակ հրացանների, մաուզերի փողեր։ Այդ գործողությանը հետևեց խմբապետ Այվազի, Ղուրդուղուլի գյուղի կուլակ և դաշնակ Հաջոնց Տիգրանի (որը հետևյալ օրը նշանակվեց «Փրկության կոմիտեի» նախագահ), համատեղ վայրահաջությունները Կոմպարտիայի, Սովետական իշխանության հասցեին։ Խմբապետ Այվազն իր «տղաներով» հարձակվելով ջոկատի անդամների վրա, սկսեց կոմունիստներին ենթարկել խիստ ծեծի, բռնությամբ հանելով բոլորի վերնազգեստները, զինաթափելով ու բանտարկելով նրանց։ Լուսադեմին նորից ծեծելով՝ բոլորիս տեղափոխեցին Ղուրդուղուլի։ Հատակին արյան մեջ գալարվող պարտոայկոմի պատասխանատու քարտուղար ընկ. Գևորգ Հարությունյանին (Պապաշային) համարելով անշնչացած, մերկացնելով և թողնելով միայն ներքին սպիտակեղենով, դաշնակ գազանները գցեցին փողոց՝ ձյան վրա։

Հետագայում պարզվում է, որ խմբապետ Այվազի մաուզերի գնդակը միայն քերծել է Պապաշայի աչքի քունքը, որը ամենայն հավանականությամբ

գանգուղեղում առաջացրել էր ուժեղ ցնցում, պատճառել ուշագնացություն։ Գիշերային ցրտի և մաքուր օդի ազդեցության տակ, նա զգաստանում է. հավանաբար չըմբռնելով տեղի ունեցած ամբողջ իրադարձությունը, ցրտից փախչելով՝ մտնում է մոտակա մարագներից մեկը։ Վաղ առավոտյան, երբ մարագ է մտնում գյուղացի մի կին՝ թոնիրի համար վառելիք տանելու, Պապլաշան խնդրում է ցույց տալ իրեն Ղուրդուղուլու ճանապարհը։ Այդ լուրը տարածվելով՝ հայտնի է դառնում գյուղին տիրած դաշնակներին։ Դաշնակ-մաուզերիստներից մեկը՝ ոմն Իսո, մոտենալով Պապլաշային՝ գնդակահարում է նրան։ Դաշնակ գազանները որևէ մեկի արգելում են մոտենալ նրա դիակին։ Երեք օր հետո Պապլաշայի դիակը թաղում են դաշտում մի փլված պատի տակ։

Ղուրդուղուլի փոխադրելով բոլոր բանտարկված կոմունիստներին, դաշնակները դաժան ծեծի, սպառնալիքների ու ահաբեկման տակ սկսեցին հարցաքննությունները։ Պարտշրջկոմի ագիտացիայի բաժնի վարիչ ընկ. Միհրան Հարությունյանին դաշնակ քննիչը,— որը դեչրլեցի տեր-Գարեգինի եղբայրն էր,— հարց է տալիս, թե ինչո՞ւ է մտել Կոմպարտիայի մեջ և պահանջում է զրավոր հրաժարվել Կոմունիստական պարտիայից, և համարել նրա քաղաքականությունը սխալ հայ ժողովրդի համար։ Ընկ. Միհրան Հարությունյանը անհողդողդ վճռականությամբ պատասխանում է՝

— Կոմունիստ եմ դարձել վճռական համոզմունքով և անդարձ։ Հայ ժողովրդի փրկությունը կործանումից, ինչպես և նրա ապագա երջանկությունն ու բարգավաճումը տեսնում եմ միայն սովետական կարգերի ու Սովետական Ռուսաստանի հետ անքակտելի կապերի հաստատման մեջ։

Այս պատասխանը բորբոքում է դաշնակ քննիչին, որն սկսում է կատաղաբար ծեծել Հարությունյանին։ Հարցաքննությունից հետո նրան բանտի խուցը բերեցին արյունոտված և ուռած դեմքով։

Երբ ինձ հարցաքննելիս քննիչը սեղանի վրա դրեց Էջմիածնի գավառային կոմերիտմիության կոմիտեի կողմից ինձ տրված մանդատը՝ շրջկոմի պատասխանատու քարտուղար լինելուս մասին, սկսեց ծաղրական և արհամարհական տոնով վիրավորել անձնական արժանապատվությունս, նա սկսեց մտրակով հարվածել ինձ ու հայհոյել։

Այսպես վարվելով նրանք բոլորի հետ, մի քանի օր հետո «ձևակերպված» արձանագրությամբ ձերբակալված կոմունիստներիս ուժեղ պահակների հսկողության տակ, փոխադրեցին Էջմիածնի բանտը։

Ցարական կառավարության կողմից կառուցված գավառային այդ զնդանը ավելի քան դաժան տեսք էր ստացել դաշնակների ավանտյուրայի օրերին։ Բանտի խցիկները լցված էին հարյուրավոր բանտարկյալներով։

Ամենամեծ խցիկը առաջին «կամերան» էր, որի ճակատին փակցված դեռևս մնացել էր ցարական կառավարության մարմինների սահմանված կարգը, այդ խցիկում տեղավորվելիք բանտարկյալների թվի, օդի ճնշման աստիճանի մասին։ Ցարական կառավարության մարմինների կողմից սահմանված էր այդտեղ տեղավորել ոչ ավելի քան 30 բանտարկյալ։ Դաշնակ «կառավարիչները» այդ նույն խցիկում լցրել էին ավելի քան 100 մարդ, որտեղ հազիվ հնարավոր էր մի կերպ կանգնել։ Պառկում էինք քարե մերկ հատակի վրա հերթով, որովհետև միաժամանակ բոլորին հնարավոր չէր պառկել։ Օդն ապականված էր ու խիստ հեղձուցիչ։ Յուրաքանչյուրին օրական տրվում էր ոչ ավելի 200 գրամ

կորեկի հաց, գոլ ջուր, որը և թեյ էր, և՛ ճաշ և՛ ընթրիք, և այն էլ այնքան քիչ քանակությամբ, որ բանտարկյալները հրաժարվում էին ընդունել, համարելով այն իրենց նկատմամբ միայն արհամարհանք ու ծաղր։

Բանդապետն էր էջմիածնեցի բախտախնդիր մաուզերիստ Շահոյենց Սուրենը։

Ծեծը, խոշտանգումները, գազանային ահաբեկումն ու ոչ մարդկային վայրենի վերաբերմունքը հանդիսանում էին դաշնակ բանտապետի, նրա օգնականի ու «հատուկ հանձնաժողովի» քննիչների հարցաքննության մեթոդները։

Տաժանակիր բանտային օրերից մեկում, երբ 1-ին խցի բանտարկյալները դուրս բերվեցին «զբոսանքի», Ղուրդուղուլու շրջանի բանտարկյալ կոմունիստներս խնդրեցինք ընկ. Միհրան Հարությունյանին (որը աշխատում էր Ղուրդուղուլու պարտշրջկոմում որպես ագիտ բաժնի վարիչ) Ղուրդուղուլու շրջանի հեղկոմի նախագահ ընկ. Պողոս Թադևոսյանի անունով մի երկտող գրել և գցել № 3 խցիկի դռան անցքից՝ խնդրելով իրազեկ դարձնել դրսից ստացվող նորությունների մասին։ Այդ դեպքը նկատում է բանտային հսկիչ Ասոն ու հայտնում բանտապետին։ Վերջինս նախ աշխատեց խորամանկությամբ պարզել երկտողի նպատակը, և երբ որևէ արդյունքի չհասավ, դիմեց իր սովորական մեթոդի կիրառմանը՝ ծեծին։ Բայց և ընկ. Պ. Թադևոսյանը և ընկ. Մ. Հարությունյանը բոլշևիկներին հատուկ համառությամբ մերժեցին որևէ բան ասել, հայտարարելով, որ այդ բոլորը հորինել է բանտային հսկիչը և, որ նման դեպք տեղի չի ունեցել։ Տանջանքները, ահաբեկումները, գազանային ծեծը վերոհիշյալ ընկերների նկատմամբ, շարունակվում էին ամեն գիշեր։ Նրանց առանձին-առանձին կես գիշերին դուրս էին տանում խցիկից, ենթարկում տանջանքների և օրերով պահում կարցերում (պատժասենյակում)։

Մի գիշեր, երբ բանտարկյալների մեծամասնությունը անզգայացած բանտային ապականված հեղձուցիչ օդից՝ ննջում էր, խցի դուռը բացվեց և չնայած ընկերների համառ դիմադրությանը, ընկ. Մ. Հարությունյանին նորից տարան, այս անգամ կարգադրելով վերցնել իր հետ իրերը։ Ոչ ոք այդ գիշեր աչք չփակեց։ Բանտի ներսում տիրող խավարը առավել ևս ճնշում էր բոլորին։ Այն վրա ամրացված մալուխի «ճրագը» վաղուց էր հանգել։ Երդիկանման լուսանցքից երբեմն-երբեմն լսվում էր գիշերապահի ոտքերի ձայնը։ Այսպես անցան 3 տանջալի օրեր։ Բոլորն էլ ողբում էին սիրելի ընկերոջ կորուստը և վրեժի ցասմամբ լցվում դեպի դաշնակները։ 4-րդ օրը լուսաբացին, երբ գիշերային մռայլ խավարը հաղիվ էր փարատվել ու լույսը նեղ լուսանցքից թափանցել ներս, ընկ. Մ. Հարությունյանին վերադարձրին խուցը։ Նրա գունատված դեմքը, երեսի ու ձեռքերի վրա առաջացած վերքերը վկայում էին, որ դահիճները սոսկալի տանջանքների էին ենթարկել նրան։ Անմիջապես հավաքվեցինք նրա շուրջը։ Նա տանջված ու նվաղած ձայնով պատմեց, թե ինչպես քննիչն ու բանտապետը սկսել էին ամենօրյա հարց ու փորձը՝ երկտողի բովանդակության մասին, սակայն մերժում ստանալով, գազանային ծեծի էին ենթարկել։ Ապա, երբ դաշնակները դարձյալ չեն հասնում որևէ արդյունքի, ներս կանչելով մի քանի մաուզերիստների, կարգադրում են տանել դուրս և գնդակահարել։ Նրանք ընկ. Մ. Հարությունյանին բերում են էջմիածնի գերեզմանատունը՝ մի փոսի առաջ, վերջին անգամ պահանջում են խոստովանել։

«Կարող եք սպանել, երբ ոչինչ չի եղել, ինչ ասեմ» — պատասխանում է ընկ. Մ. Հարությունյանը։ Այդ ձևով անգամ չհասնելով իրենց նպատակին, դաշնակ-մաուզերիստների ավագը առաջարկում է Հարությունյանին՝ օդի մեջ ատրճանակի կրակոցից հետո վայր ընկնել երեսնիվար և ծպտուն չհանել ... ապա՝ իրենց մտադրությունը իրագործելուց հետո, դեպքի վայրն են բերում ընկ. Պ. Թադևոսյանին, ցույց տալով փոսի եզրին ընկած Մ. Հարությունյանի «դիս»կը», ասում՝ «տեսնում ես սրան ոնց սատկացրինք, այնպես էլ քեզ կանենք, եթե չասես թե ինչ էր գրված նամակում»։ Ընկ. Պ. Թադևոսյանը ըմբռնելով, որ այդ բոլորը սարքված բաներ են, և եթե անգամ ընկ. Մ. Հարությունյանը գնդակահարված է, ուրեմն նա ոչինչ չի հայտնել, նորից է մերժում նրանց դահանջը, հայտնելով, որ նման երկտող ոչ ոք չի գրել։ Դաշնակները կատաղի հայհոյանքներով և ծեծով ընկ. Պ. Թադևոսյանին վերադարձնում են բանտ, իսկ ընկ. Մ. Հարությունյանին առանձին տանում են «Արտակարգ հանձնաժողով», որտեղ նրան երեք օր տանջանքների են ենթարկում, սակայն որևէ արդյունքի չհասնելով՝ նորից վերադարձնում են բանտ։

Մարտ ամսի երկրորդ կեսի մի օր, կեսօրից հետո, ինձ նորից կանչեցին հարցաքննության։ Բանտապետի սենյակում դարձյալ տրվեցին քննիչի բազմաթիվ անգամ կրկնված հարցերը։ Բանտային դաժան պայմանների հետևանքով, ինչպես և շատ վատ սննդի պատճառով ֆիզիկապես չափազանց թուլացել էի, հավաքեցի բոլոր ուժերս և զայրույթով լի ասացի.

— Քանիերորդ անգամ պետք է պատասխան տալ նույն հարցերին. թե՞ կարծում եք՝ տարբեր անգամ հարցնելով, պատասխանն էլ տարբեր կլինի։

Իմ այս պատասխանին հաջորդեց բանտապետ Սուրենի ուժգին ապտակն ու այնուհետև նրա և քննիչի համատեղ վայրենի ծեծը, որից հետո ես ուշաթափվեցի։ Գիտակցության եկա մի խրոխտ ու համարձակ ձայնից։ Ես ընկած էի բանտի բակի ջրհորի կողքին. թաց էին գլխիս մազերը, վերնազգեստիս վերին մասը. վայրենի ծեծից ուշագնաց լինելով, ինձ քաշ էին տվել ջրհորի մոտ ու ջուր թափել գլխիս։ Ահա այդ դրության մեջ զգաստանալով տեսա բանտի 3-րդ խցիկի ներսում, պատուհանի մոտ կանգնած ընկ. Գառնիկ Ղալաչյանին, որը բռնել էր երկաթյա ցանցից ու զայրալից սպառնում էր այդ նույն պատուհանի տակ կանգնած բանտի կոմիսար Գեղամ Թարխանյանին։ Վերջինս պատասխանում էր նրան ամբարտավան և անվայել խոսքերով։

Ընկ. Գառնիկ Ղալաչյանը, ինչպես մատնանշեցի վերևում, Բաքվի Կոմունայի ակտիվ մասնակից, բանվոր բոլշևիկներից էր, Հայաստան էր ուղարկվել մոբիլիզացիոն կարգով։ Էջմիածնի գավառային հեղկոմի նախագահի տեղակալն էր։ Ամենայն հավանականությամբ նրան հարցաքննությունից նոր էին խուց վերադարձրել։ Նա խիստ գրգռված ու համարձակ կշտամբում էր Գեղամ Թարխանյանին և նրա միջոցով բոլոր դաշնակցականներին։

— Դուք, պարոնայք դաշնակցականներ,— ասում էր նա,— հայ ժողովրդի դժբախտության պատճառն եք եղել սկզբից, և շարունակում եք այդպիսին մնալ և այսօր։ Հայ ժողովուրդը իր փրկությունը գտավ սովետական կարգեր հաստատելով և իր ազատարար Սովետական Ռուսաստանին միանալու մեջ։ Բայց դուք, դաշնակցականներդ, կառչելով իմպերիալիստական տերությունների կառքից, չեք թույլ տալիս մեր ժողովրդին՝ ընթանալու այդ առաջընթաց ուղիով։ Դուք այդ նպատակով բարձրացրիք զինված ավանտյուրա, բանտերը

լցրիք կոմունիստներով և սովետական ազնիվ անպարտիական աշխատակիցներով, և այդ միջոցով ցանկանում եք նորից վերահաստատել ձեր տիրապետությունը։ Միևնույնն է, իզուր են ձեր հույսերը, ոչ թե ձեր օրերն, այլ ժամերն են հաշված»։

Բանտի կոմիսար Գեղամ Թարխանյանը փրփուրը բերանին անվայել հայհոյանքներ էր շպրտում բոլշևիկների պարտիայի, նրա ղեկավարների և ընկեր Գառնիկ Ղալաչյանի հասցեին։

Կամաց-կամաց խավարը պատում էր բանտի մռայլ ու դժոխադեմ բակը։ Ինձ մոտեցավ բանտի հսկիչներից մեկը, կարգադրեց վեր կենալ ու անցնել խուցը։ Պատերին հենվելով, հազիվհազ մոտեցա խցի դռանը. հսկիչը բաց անելով երկաթյա դուռը ոտքով հրեց դեպի ներս, դուռը փակելով հետևիցս։ Այս օրը բանտարկյալ ընկերներին հայտնի դարձավ, որ այդ նույն գիշերը լուսաբացին ընկ. Գառնիկ Ղալաչյանին դուրս տանելով բանտից՝ դաշնակ գաղանները գնդակահարել էին։ Այսպես նրանք գազանաբար գնդակահարեցին 15 անձնվեր կոմունիստների՝ Վահան Մելիք-Դադյանին, Գառնիկ Սագոյանին, Լևոն Լիսիցյանին, Ամասյա Հարությունյանին, Մարկոս Մարկոսյանին, Աբգար Վարդանյանին, Նավասարդ Նավասարդյանին, Լևոն Թաիրյանին, Ստեփան Պապովյանին, Գառնիկ Ղալաչյանին, Սեթ Սարգսյանին, Նիկողոս Ասատրյանին, Կոլյա Հակոբյանին, Ղարախան Սարգսյանին, Հայրապետ Սադոյանին, որոնց աճյունները հանգչում են Էջմիածնի միջնակարգ դպրոցի հրապարակի եղբայրական գերեզմանում։

Դաշնակներն ապրում էին իրենց ավանտյուրայի օրհասական վերջին օրերը։ Նրանք վախ զգալով բանտարկված շուրջ 400 կոմունիստներից, մարտի վերջին օրերին բանտի կտուրը դրեցին ծանր հաստոցավոր գնդացիր։ Բայց դաշնակների օրերն արդեն հաշվված էին։ Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը բանտի դռները բացվեցին, քաջարի Կարմիր Բանակի զորամասերը քաղաքացիական կռվի ֆրոնտում ջարդ ու փշուր անելով դաշնակցական ավանտյուրիստների բանդաները, մտան Էջմիածին և ազատեցին բանտարկված կոմունիստներին։ Ուրախության արցունքները փայլում էին ազատարարների և ազատվողների աչքերում։

Նորից փողփողաց ալ կարմիր դրոշը՝ բանվորների արյամբ ներկված մեծ ազատության սիմվոլը։ Դաշնակ ավանտյուրիստները բոլշևիկների մասին տարածելով առասպելական պրովոկացիաներ, գլխիկոր փախչում էին։ Նրանք հևիհև հասել էին Մարգարա, իրենց վերանորոգած Արազի կամուրջով անցնելու, թուրք բեգերի, խաների կալվածատերերին ապավինելու համար։ Բայց, իզուր ջանքեր, ստանալով կտրական մերժում, դիմեցին դեպի Արագածի բարձունքները. ապա մի քանի օրից հետո հարկադրաբար հանձնվեցին Սովետական Հայաստանի ռևոլյուցիոն իշխանություններին, որոնք, մեծահոգությամբ թույլատրեցին նրանց անցնել խաղաղ շինարարական աշխատանքի։

Հայաստանի աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ անցավ խաղաղ շինարարական՝ երկրի տնտեսության վերականգնման ու զարգացման աշխատանքներին։

Հայ ժողովուրդը նոր շունչ առած՝ սկսեց յուր զարգացման զարթոնքի իսկական դարն ապրել։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ սկսեց

զարգանալ ու ամրապնդվել ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական հայկական կուլտուրան, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը։

Կոմունիստական մեծ պարտիայի ղեկավարությամբ ստեղծագործական խաղաղ աշխատանքի անցած էջմիածնի աշխատավորությունը չմոռացավ իր ազատության համար զոհված կոմունիստներին։ 1923 թվականի նոյեմբերի 7-ին Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 6-րդ տարեդարձի օրը էջմիածնում, միտինգը վերջանալուց հետո, հավերժացվեց 1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի ժամանակ դաշնակների կողմից գնդակահարված 15 կոմունարների հիշատակը՝ կանգնեցնելով հուշարձան։

Հուշարձանի բացմանը ելույթ ունեցավ դեպքերի մասնակիցներից ընկ. Գ. Աբովը, որը նկարագրեց զոհված կոմունիստների դերը Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրերին, պատմեց հիշողություններ այն հերոսական աշխատանքների և ջանքերի մասին, որը գործադրում էին նրանք սովետական կարգերի հաստատելուց հետո երկրի բարգավաճման, կուլտուրայի զարգացման, աշխատավորության խաղաղ ու ստեղծագործական աշխատանքները ապահովելու համար, և որոնք մինչև իրենց կյանքի վերջին րոպեն հավատարիմ մնացին Կոմունիստական պարտիայի վեհ սկզբունքին։

Ապա ելույթ ունեցան զոհված կոմունիստների հարազատները՝ Ստեփան Պապովյանի մայրը և Լևոն Լիսիցյանի հայրը։ Ստեփան Պապովյանի մայրը երախտագիտության մեծ զգացմունքով շնորհակալություն հայտնեց Կոմունիստական պարտիային և ընկերներին, որոնք հարգում և հավերժացնում էին կոմունիզմի վեհ գաղափարների համար զոհված մարտիկների հիշատակը։ Նա դիմելով երիտասարդությանը և պիոներներին (պատկոմներին), նկարագրեց Ստ. Պապովյանի գործունեությունը Աշտարակի մանկատներում՝ մանուկների պաշտպանության և դաստիարակության ուղղությամբ։ Որպես ծնող մայր, նա իր ելույթի վերջում հիշեցրեց բոլորին, որ իր զավակը մյուս բոլոր կոմունիստների հետ զոհվել է կոմունիզմի մեծ գործի համար, հիշեցրեց այն խոսքերը, որ նա ասել է իրեն գնդակահարելու տանելիս։ «Մեզ կսպանեք, բայց ձեզ երբեք չի հաջողվի ոչնչացնել մեր գաղափարները»[1]։

Այն օրվանից անցել են ավելի քան երեք ու կես տասնամյակներ։ Այդ տարիների ընթացքում հայ աշխատավորությունը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռք է բերել կուլտուրայի, արվեստի, էկոնոմիկայի բնագավառներում հսկայական հաջողություններ։ Մեր ժողովուրդը երախտագիտությամբ իր սրտում վառ կպահի այն մարդկանց հիշատակը, որոնք իրենց կյանքը զոհաբերեցին՝ հանուն սովետական կարգերի հաստատման մեր երկրում։

---

[1] «Խորհրդային Հայաստան», № 250, 1923։